## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

***«Ուայթ սփեյս» ՍՊԸ-ի կողմից Երևանի Այասի փողոց 78/6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի (2 շենք) կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության երկրորդ հանրային լսման***

***14.10.2025թ.*** ***ք. Երևան***

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (ՀՕ-150) համաձայն և ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի N2343-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ 2025թ. սեպտեմբերի 14-ին՝ ժամը 11:00-ին, Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ «Ուայթ սփեյս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Այասի փողոց 78/6 հասցեում նախատեսվող բազմաբնակարան բնակելի շենքերի (2 շենք) կառուցման՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության և նախագծային փաստաթղթի վերաբերյալ երկրորդ հանրային լսումը:

Հանրային լսմանը ներկա էին Կենտրոն վարչական շրջանի (ԿՎՇ) ղեկավարի տեղակալ Նիկոլայ Սարիբեկյանը, ԿՎՇ աշխատակազմի քարտուղար Նանա Աբելյանը, «Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամներ Աննա Ավետիսյանը և Արմեն Քոչարյանը, ԿՎՇ Քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի աշխատակիցները, նախաձեռնողի ներկայացուցիչ «Հրաչյա Հովհաննիսյան փրոջեքթ» ՍՊԸ ի տնօրեն Հրաչյա Հովհաննիսյանը, նախագծի ճարտարապետ Ռաֆայել Իսահակյանը, անկախ փորձագետ (ՇՄԱԳ հաշվետվության կազմող) Արամ Գալոյանը, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Աստղիկ Վարդանյանը (այսուհետ՝ Մասնագետ) և այլոք:

Հանրային լսմանը բացման խոսքով հանդես եկավ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Ա. Վարդանյանը: Ողջունեց ներկաներին, ներողություն խնդրեց 2025 թվականի հանրային երկրորդ լսումը չկայանալու համար, նշեց՝ որ հանրային լսման չկայանալու պատճառ է հանդիսացել առողջական վիճակի կտրուկ վատթարացումը և խցանումների պատճառով երկու փորձագետների ուշացումով տեղ հասնելը: Այնուհետև ներկայացրեց նախատեսվող գործունեության փորձաքննական գործընթացի ընթացակարգը, նպատակը, օրենսդրական կարգավորումները, դիտողությունների և առաջարկությունների ներկայացման կարգը, ազդեցությունների շրջանակը և այլն:

Նշեց, որ նախատեսվող գործունեությունը փորձաքննության է ենթարկվում համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով (այսուհետ՝ Օրենք) սահմանված պահանջներով և Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի (կառուցապատման ընդհանուր մակերեսը գերազանցում է 15.000 քմ):

Խոսքը փոխանցեց Ընկերության նախատեսվող գործունեության նախագծի ճարտարապետին, ով ներկայացրեց նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկա-տնտեսական ցուցանիշները, տեխնիկա-տեխնոլոգիական լուծումները: Քննարկում ծավալվեց ճարտարապետի կողմից ներկայացված տեխնիկա-տնտեսական ցուցանիշների շուրջ:

Այնուհետև ավագանու անդամներն իրենց հետաքրքրող հարցերն ուղղեցին նախաձեռնողի ներկայացուցչին, որոնք հիմնականում վերաբերում էին նախատեսվող գործունեության մոտեցնող ճանապարհներին, մուքերին և ելքերին, ապաստարան-թաքստոցն առանձին հատված տրամադրելուն, տարածքում առկա ջրամիացման և ջրահեռացման խնդիրներին, նշեցին՝ որ «Վեոլիա» ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանների արդյունքում համայնքը կանգնում է խնդիրների առջև:

«Մայր Հայաստան» խմբակցության ավագանու անդամ Արմեն Քոչարյանը դիտարկվող տարածքում ջրամիացման և/կամ ջրահեռացման, կոյուղատարի բավարար լինելու հետ կապված հարցն ուղղեց Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի տեղակալին:

ԿՎՇ վարչական շրջանի ղեկավարը պատասխանեց նշեց, որ ծանրաբեռնված են և ունեն վերանորգման կարիք:

Ապա հարցն ուղղեց նախաձեռնողի ներկայացուցչին՝ հաշվի առնելով քաղաքում տվյալ խնդրի առկայությունը բոլոր վարչական շրջաններում, արդյոք նախապես ուսումնասիրություն իրականացրել են շահագործման փուլում հետագա խնդիրներից խուսափելու նպատակով: Նախաձեռնող կողմը նշեց, որ «Վեոլիա» ՓԲԸ-ն տրամադրել է ջրամիացման և/կամ ջրահեռացման միացման տեխնիկական պայմանը և հավելյալ ուսումնասիրություն չեն իրականացրել:

Ավագանու անդամները առաջարկեցի նաև՝ թաքստոց-ապաստարանների համար նախատեսել առանձին հատվածներ՝ առանց երկակի նշանակության:

Քննարկումը շարունակվեց հարց-պատասխան ձևաչափով: Հարցերը հիմնականում վերաբերում էին նախատեսվող գործունեության տեղադիրքին, հարակից տարածքում առկա բնակելի տներին, տարածքում առկա ենթակառուցվածքներին, տեխնիկական պայմաններին, կանաչապատման համար ընտրված մակերեսին, նոր տնկվող ծառերի տեսակային և քանակային կազմին, վերահսկողությանը և այլն:

Մասնագետը նշեց, որ նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են փորման, բեռնման աշխատանքների, հողային զանգվածների տեղափոխման, շինարարական տեխնիկայի շահագործման, բետոնային աշխատանքների հետ: Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ և նախաաձեռնողի կողմից միջոցառումների բարեխիղճ իրականցումը և հարկ եղած դեպքում հավելյալ միջոցառումների նախատեսումը հիմք են, որպեսզի ազդեցությունները լինեն կառավարելի:

Մասնագետը նշեց, որ համաձայն կառավարության Որոշման՝ շահագրգիռ հանրության գրավոր կամ էլեկտրոնային կարծիքները, դիտողությունները կամ առաջարկությունները՝ առկայության դեպքում պետք է ներկայացվեն ծանուցումից հետո՝ 20 աշխատանքային օրվա ընթացքում փորձաքննական կենտրոն:

Հանրային լսման ընթացքում հնչեցին նաև այլ հարցեր:
Հանրային լսումները նկարահանվել է:
Հանրային լսումների մասնակիցների ցանկը կցված է արձանագրությանը:

Լսումների վարող, պատասխանատու
«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Աստղիկ Վարդանյան

Նախաձեռնող
«Ուայթ սփեյս» ՍՊԸ